ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«17» 05 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000036

Ձեռնարկողը՝ ***«Զանգված» ՍՊԸ***
Ք. Երևան, Գյուլիքեխվյան 7/11

Գործունեությունը՝ ***Տաթև համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (Սյունիք-7) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն***
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դոնոյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 000036

<<17>> 05 2019թ.

Սյունիքի մարզի Տաթև համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (Սյունիք-7) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Զանգված» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Հիմադրույթային փաստաթուղթ. - ազդեցության ռազմավարական գնահատման (ՌԷԳ) հաշվետվություն և կից փաստաթղթեր

Սյունիքի մարզի Տաթև համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծը մշակվել է ՀՀ կառավարության որոշմամբ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական կոմիտեի պատվերով /N ՀՀՔՊԿ – ԲՄԱՇՁԲ-18/1-3/:

Համայնքի կազմում ընդգրկված են հետևյալ բնակավայրերը՝ Տաթև, Շինուհայր, Հալիձոր, Խոտ, Հարժիս, Սվարանց, Տանձատափ և Քաշունի գյուղերը (Սյունիք-7):

Սյունիքի մարզի զարգացման ծրագրում սահմանվել են հետևյալ ռազմավարական նպատակները՝

• տնտեսության վարման ինտենսիվ մեթոդների կիրառման, աշխատատեղերի ստեղծման, աղքատության կրճատման միջոցով Սյունիքի մարզում տնտեսական աճի ապահովում,

• թույլ զարգացած տարածքների անհամաչափությունների նվազեցում, մարզի սահմանամերձ հեռավոր համայնքներում ներդրումների միջոցով[a] համաչափ բարձր զարգացվածության ապահովում,

• մարզային և տեղական դերակատարների ակտիվության բարձրացում և մարդկային կապիտալի կառավարման հմտությունների բարելավում:

Սահմանված երեք նպատակներին հասնելու համար սահմանվել են հիմնական գերակա երկու ուղղություններ՝ արդյունաբերության աճ, շեշտը դնելով փոքր և միջին բիզնեսի զարգացման վրա և գյուղատնտեսության ինտենսիվ զարգացում՝ նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ, մարզի գյուղատնտեսական ոլորտի արդիականացամբ:

Տարածքային պլանավորման նպատակն է ստեղծել տարածքների կառուցապատման և կայուն զարգացման նախադրյալներ տարածքների զարգացման գործընթացում՝ ապահովելով հասարակական և անձնական շահերի միջև ներդաշնակություն հետևյալ դրույթների միջոցով.

- քաղաքային և գյուղական բնակավայրերի, ուրբանացված և միջբնակավայրային տարածքների հավասարակշռված զարգացում և էկոլոգիական վերակառուցում, քաղաքաշինական գործունեության իրականացման համար բարենպաստ պայմանների ստեղծում՝ օրենսդրության և տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան,

- բնակչության բնակության մակարդակի բարձրացում, սոցիալական ենթակառուցվածքի կատարելագործում,

- էկոլոգիապես անվտանգ արդյունաբերական, տրանսպորտի և ինժեներատեխնիկական ենթակառուցվածքների ձևավորում,

- պատմամշակույթային ժառանգության օբյեկտների պահպանում և վերակառուցում,

- քաղաքաշինական կանոնակարգման միասնական համակարգի ձևավորում՝ ներդրումային գրավչությունը խթանելու նպատակով,

- էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում, էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործում,

- աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացում,

- բնակչության անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների կազմակերպում,

- պետական-մասնավոր գործունեության շրջանակներում զարգացման տարածքային անհամաչափությունների մեղմմանն ուղղված միջոցառումների իրականացում,

- բնակավայրերի համաչափ զարգացում՝ դրանցում առկա ներուժի լիարժեք օգտագործմամբ և բնակավայրերի ուժեղացմամբ՝ հատուկ ուշադրություն դարձնելով թույլ զարգացած տարածքներում ներդրումների համար նպաստավոր ոլորտների բացահայտմանը և համապատասխան գոտիների ընտրությանը:

Որպես տարածական զարգացման հիմնական միջոցառումներ նախատեսված են.

- հասարակական տրանսպորտի արդյունավետության բարձրացում, հարևան համայնքների, մարզկենտրոնի և մայրաքաղաքի հետ հուսալի տրանսպորտային կապի ապահովում,

- կրթական ծրագրերի արդիականացում, կրթական օջախների շինությունների վերանորոգում, կահավորում ժամանակակից տեխնիկական միջոցներով,

- բուժ-սպասարկման հաստատությունների ցանցի ընդլայնում, շենքային պայմանների բարելավում, ժամանակակից ախտորոշման և լաբորատոր միջոցներով կահավորում,

- խմելու ջրի ցանցի վերանորոգում, ջրի կորուստների կրճատում,

- համայնքների կոյուղացում,

- բնակավայրերում տեղական /լոկալ/ մաքրման համակարգերի կառուցում,

- ոռոգման ցանցերի վերանորոգում, ընդլայնում, կորուստների կրճատում, ժամանակակից խնայողական եղանակների ներդրում,

- բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկության ապահովում,

- աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի նվազեցում 10%-ով,

- միջհամայնքային, ներհամայնքային, դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում,

- հեղեղատարների կառուցում,

- ներհամայնքային ճանապարհների լուսավորությամբ ապահովում,

- բուսաբուծության ու անասնաբուծության զարգացում,

- գյուղմթերքի գնման, վերամշակման և սպառման կառավարում,

- բրդի վերամշակման խթանում,

- գործվածքների արտադրության կազմակերպում,

- գորգագործական դազգահների և անհրաժեշտ գործիքների ձեռք բերում և գորգագործական ձեռնարկությունների կազմակերպում,

- կաթնամթերքի, մսամթերքի մթերմամբ զբաղվող ձեռնարկությունների կազմակերպում,

- բանջարեղենի, հատապտուղների և մրգի մթերում,

- համայնքի բնակավայրերի կառուցապատում, բարեկարգում և կանաչապատում,

- համայնքների աղբահանության համակարգերի բարելավում, արդիականացում,

- սանիտարական աղբավայրերի ստեղծում,

-գերեզմանատների բարեկարգում, սանիտարապաշտպանիչ գոտիների կազմակերպում,

- աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում,

- համայնքում բնակարանային շինարարության խթանում,

- զբոսաշրջային հեռանկարներ ունեցող տարածքներում՝զբոսաշրջության զարգացման խթանում,

- զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծում,

- համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում,

- արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների նախատեսում:

Տաթև համայնքի տեղանքը, բնապատկերը և առանձնապես պատմամշակութային միջավայրը լավագույն պայմաններ է ստեղծում տուրիզմի զարգացման համար՝ Տաթևի վանական համալիրը, բազմաթիվ այլ պատմական հուշարձաններ և վայրեր: Այստեղ գործում են Տաթևի ճոպանուղին, հյուրանոցներ, սպասարկման օբյեկտներ:

Հալիձորը և Տաթևի վանքը իրար հետ կապող ճոպանուղին գրանցվել է Գինեսի ռեկորդների գրքում՝ որպես աշխարհի ամենաերկար հետադարձելի ճոպանուղի, որը շարժվում է առանց կանգառի:

Նախատեսված են զբոսաշրջության զարգացման հետևյալ ուղղությունները.

- ավանդական տուրիզմի զարգացման համար անհրաժեշտ է ընդլայնել Տաթևի վանական համալիրի ենթակառույցները, կառուցել նոր հյուրանոցներ, զվարճանքի և սպասարկման օբյեկտներ,

- էկոլոգիական տուրիզմի զարգացման համար անհրաժեշտ է ընտրել և կահավորել այն բոլոր բնական վայրերը, որոնք մեծ գեղագիտական և բնական նշանակություն ունեն: նախատեսվող Տաթևի "Զիպլայն" ծրագիրը ևս կխթանի տուրիզմի զարգացմանը:

Ներկա պայմաններում կանոնավոր աղբահանություն, ինչպես նաև սանիտարական աղբավայրեր Տաթևի համայնքում չկան: Այս իրավիճակը առաջացնում է շրջակա միջավայրի աղտոտման զգալի ռիսկեր:

Աղբահանության արդյունավետ կառավարման համար կազմակերպվելու է մեկ տարածաշրջանային սանիտարական աղբավայր, իսկ մնացած բնակավայրերում նախատեսվելու է փոքր ժամանակավոր կուտակման աղբավայրեր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տաթևի համայնքում խոշոր բնակավայրեր չկան, նպատակահարմար է տարածաշրջանային աղբավայր հիմնել Սիսիան քաղաքում, ուր կհավաքվի Սիսիանի, Տաթևի և Գորայքի համայնքների պինդ կենցաղային աղբը:

Տաթևի համայնքի տարածքում շահագործվում են մի շարք միջին և փոքր հանքավայրեր: Տարածքում նաև կատարվում են երկրաբանահետախուզական աշխատանքներ, որի արդյունքում հանքարդյունաբերական գործունեությունը կընդլայնվի:

SECRETARY OF THE COMMISSION OF EXPERTS

Տարածաշրջանի գյուղատնտեսական արտադրության հետագա զարգացումը նպատակահարմար է տանել օրգանական պարարտացման և կաթիլային ոռոգման եղանակների լայն ներդրման ուղիով:

Օրգանական և էկոլոգիական գյուղատնտեսությունը բացառում է տոքսիկ պարարտանյութերի՝ պեստիցիդների, քիմիական պարարտանյութերի կիրառումը: Դրանց փոխարեն օգտագործվում են օրգանական պարարտանյութեր (հիմնականում՝ գոմաղբ) և վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարն իրականացվում է միայն բուսական պատրաստուկներով, իսկ օրգանական սննդամթերքի արտադրության մեջ չեն կիրառվում արհեստական նյութեր և ճառագայթում:

Հայաստանում օրգանական գյուղատնտեսությունը խթանելու նպատակով 2015 թվականի սեպտեմբերից մեկնարկել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն /ՕԳԱՆ/ դրամաշնորհային եռամյա ծրագիրը, որը համաֆինանսավորվում և իրականացվում է Ավստրիայի զարգացման գործակալության /ԱԶԳ/ կողմից:

Կաթիլային ոռոգման ներդրումը ևս կարևոր նշանակություն ունի, ինչը թույլ կտա առաջին հերթին էականորեն կրճատել ջրի պահանջը, ինչպես նաև բարելավել հողերի որակը:

Սյունիքի մարզում նախատեսված են քամու և արևի էներգիայի օգտագործմամբ էլեկտրակայանների նախատեսման ծրագրեր:

Սյունիքի մարզում Տաթև համայնքի տարածքում նախատեսվում է "Գորիսի հողմաէլեկտրակայանի" կառուցում:

Ծրագրով կատարված աշխատանքների արդյունքում կարելի է եզրակացնել, որ միկրոռեգիոնալ զարգացման ծրագրով նախատեսվող աշխատանքները կնպաստեն շրջանի սոցիալական և բնապահպանական իրավիճակի առողջացմանը:

Բնապահպանական իրավիճակի բարելավմանն ուղղված նախատեսված են հետևյալ միջոցառումները .

- երկրորդական և միջգյուղական ճանապարհների ասֆալտապատում և խճապատում,
- բազմաբնակարան շենքերի բակային տարածքների բարեկարգում և ասֆալտապատում, խաղահրապարակների կառուցում, շահագործվող շինությունների ու կառույցների տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության գնահատում,
- շենքերի բակերի և գյուղամիջյան ճանապարհների լուսավորության անցկացում,
- ջրամատակարարման համակարգի և կոյուղու բարեկարգում,
- անձրևաջրերի հեռացման համակարգի նախատեսում,
- գետեր թափվող տնտեսա-կենցաղային և արտադրական հոսքաջրերի կենսաբանական մաքրման կայանի նախատեսում,
- վնասված հասարակական և արտադրական նշանակության շինությունների և կառույցների վերականգնում,
- ոռոգման ներքին ցանցի վերականգնում,
- համայնքներում հանգստի գոտիների ստեղծում,
- համայնքների տարածքում աղբահանման կազմակերպում,
- մսի վերամշակման արտադրամասի ստեղծում (սպանդանոցի կառուցում),
- աղբավայրերի և աղբամշակման գործարանի կառուցում,
- ճանապարհի եզրերին, հանգստի գոտիներում կանաչապատման իրականացում,
- ասֆալտապատման, ճանապարհաշինության աշխատանքների իրականացում,

– մեքենաների տեխնիկական վիճակի և որակի խիստ վերահսկողության սահմանում, ինչը կնպաստի ավտոտրանսպորտի արտանետումների կրճատմանը,
– գազով ջեռուցման իրականացում, ինչը կկրճատի մթնոլորտային արտանետումները,
- արդյունաբերական առաջատար տեխնոլոգիաների ներդնում:

Ներկայացված հիմնադրույթային փաստաթղթի ուսումնասիրության, փորձաքննական գործընթացում ստացված կարծիքների, համայնքապետարանում իրականացված հանրային քննարկումների արդյունքների հիման վրա կարելի է անել հետևյալ եզրահանգումը:

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային, սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի՝ որպես ամբողջական հատակագծային միավորի և համայնքների՝ որպես դրա մասը կազմող, փոխադարձ տարածքային, տնտեսական և ենթակառուցվածքային կապերով միմյանց կապված բաղադրիչների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը: Այն ունի մեկ նպատակ՝ բնակչության և այցելուների համար ձևավորել առավել հարմարավետ, անվտանգ, ապահով և գեղագիտական բարձր հատկանիշներով օժտված գրավիչ կենսամիջավայր:

Փորձաքննական պահանջներ

1. Հիմնադրույթային փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
2. Հիմնադրույթային փաստաթղթի գործունեության ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմինների և հանրության համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Զանգված» ՍՊԸ կողմից ներկայացված Սյունիքի մարզի Տաթև համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (Սյունիք - 7) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ՝ Զ. Զուռնաչյան